ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՆ ՄԵՂՐԻ, ԳՈՐԻՍ, ԳՈՐԱՅՔ, ՏԵՂ ԵՎ ՔԱՋԱՐԱՆ (ՔԱՂԱՔԱՅԻՆ) ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ: ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄՆԵՐԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԵՆ ՄԻՆՉԵՎ ՕԳՈՍՏՈՍԻ 19-Ի ԺԱՄԸ 18:00:

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 16 ՕԳՈՍՏՈՍԻ 2016Թ.
№ 24 (400)

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ՎԱԼԵՐԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ. «Եթե սահմանին կանգնած զինվորը զգոն չլինի, կարգապահ ու մարտունակ չլինի, բնականաբար, հակառակորդն առիթից կօգտվի»

Բանակ-հասարակություն կապի, հայ-ադրբեջանական սահմանի նախիջեւանյան հատվածում տիրող օպերատիվ իրավիճակի, զորքերի մարտական պատրաստվածության եւ այլ հարցերի շուրջ է զրույցը ՀՀ զինված ուժերի չորրորդ բանակային զորամիավորման նորանշանակ հրամանատար, գնդապետ Վալերիկ Քոչարյանի հետ:

– Պարո՛ն գնդապետ, նախ շնորհավորում ենք Ձեզ չորրորդ բանակային զորամիավորման հրամանատար նշանակվելու կապակցությամբ: Զրույցը սկսենք ավանդական հարցից. ինչպե՞ս եք գնահատում հայ-ադրբեջանական սահմանի նախիջեւանյան հատվածի օպերատիվ վիճակը:

– Նախիջեւանյան հատվածում իրադրությունը կայուն է՝ առանց որեւէ միջադեպերի, խնդիրների ու լարվածության: Մենք մեր ծառայությունն ենք իրականացնում, հակառակորդը՝ իր ծառայությունը: Լուրջ միջադեպեր, անհարկի կրակոցներ, հրադադարի ռեժիմի խախտում, սահմանի խախտումներ, դիվերսիոն հետախուզական որեւէ գործողություն կամ նմանատիպ փորձ չեն գրանցվել: Այս հատվածում սահմանը հանգիստ է, որովհետեւ այստեղ իրադրությունը տարբերվում է ղարաբաղյան հատվածից: Սա, նախեւառաջ, պայմանավորված է նաեւ զորամիավորման զինծառայողների զգոնությամբ, զինվորական պարտականությունները լիարժեք կատարելով եւ այն պարտքի զգացումով, որ նրանք մշտապես տածում են դեպի ժողովուրդը, ազգաբնակչությունը, սահմանամերձ գոտիները: Եթե սահմանին կանգնած զինվորը զգոն չլինի, կարգապահ ու մարտունակ չլինի, բնականաբար, հակառակորդն առիթից կօգտվի: Բայց հակառակորդը տեսնում է, որ մեր բանակում հատկապես մարտական հերթապահության հարցերում զգոնությունն է գերիշխում: Մի խոսքով՝ նախիջեւանյան հատվածում խաղաղ, կայուն իրավիճակ է, որ ամբողջովին վերահսկվում է թե՛ զորամիավորման, թե՛ առանձին զորամասերի հրամանատարության կողմից:

– Ինչպե՞ս եք գնահատում զորամիավորման զորքերի մարտական պատրաստվածության մակարդակը:

– Արդեն հինգ տարի է՝ զինվորական ծառայությունս անց եմ կացնում այս զորամիավորման մեջ, որից երկուսուկես տարին՝ հրամանատարի տեղակալ-շտաբի պետ, ուստի զորքերում տիրող իրադրությանը, վիճակին, ներքին մթոնոլորտին լիովին ծանոթ եմ: Զորամիավորման նորմալ վիճակն է նաեւ թելադրել նմանատիպ սերնդափոխությունը. չորրորդ

էջ 4

Իսկ նենգ բանսարկուն ցնծում է ուրախ. Թախծում է գունդբ հրեշտակների, Սատանան պարում լիրբ հռհռոցով...

ԳՐ. ՆԱՐԵԿԱՑԻ
«Մայյան ողբերգության», ԲԱՆ Դ, Ա

Չկարողացա մնալ անտարբեր

Դիրքորոշում

Հայաստանի շուրջ, Հայաստանի մեջ տեղի ունեցող վերջին իրադարձություններն անտարբեր չեն կարող թողնել որեւէ հայ մարդու՝ անկախ նրա բնակության վայրից՝ սփյո՞ւռք, թե՞ Հայաստան: Համեմատելով, հակադրելով այդ իրադարձությունները եւ առանձնապես Ժիրինովսկու մոլագար հայտարարությունը՝ մտահոգությունս Հայաստանի համար ավելի է թանձրանում. ինչպիսի՞ Հայաստան ենք թողնելու մեր սերունդներին:

Այո՛, աշխարհը եւ ոչ միայն մենք հայտնվել ենք բարդ աշխարհաքաղաքական վիճակում, իսկ դրան գումարվել է հայրենիքիս ներքին քաղաքական բարդ դրությունը, Արցախի հարցի լուծման անորոշությունը, շրջանառության մեջ դրված հողերի հանձնման ասեկոսեն, տարածաշրջանում խոշոր խաղացողների շահերի բախումը:

Անժխտելի է, որ կառավարման թերությունների պատճառով երկրում կուտակվել են բազում չլուծված խնդիրներ: Արտագաղթի, դժգոհությունների հիմնական պատճառը ոչ թե սոցիալական դժվարություններն են, այլ տիրող իրավական, տնտեսական անարդարությունները, օլիգարխիկ տնտեսությունը, տնտեսական ու քաղաքական մենաշնորհը:

Մտածում էի, որ ապրիլյան դեպքերից հետո ազգովի խորը վերլուծություններ կկատարենք, կբացահայտենք բացթողումների պատճառները, եւ իշխանության կողմից կձեռնարկվեն քայլեր քառօրյա պատերազմի դասերը սովորելու համար:

Իմ կարծիքով կուտակված խնդիրների մյուս պատճառը հրացանավոր մարդու դերի գերագնահատումն է շինականի, հողի մշակի, մշակույթի, գիտության աշխատողի եւ այլոց աշխատանքի նկատմամբ: Հասանք նրան, որ կառավարման ապարատ ներթափանցեցին ոչ միայն նրանք, ովքեր իրապես մարտնչել էին Արցախյան գոյամարտում, այլեւ նրանք, ովքեր երեւանյան հեռուստաթերներով հորջորջում էին, թե մասնակցել են Կոռնիձորի գոյություն չունեցած «ճակատամարտին»:

Հայտնվեց շառլատանների մի խումբ, որը հայտարարում էր, թե «թեյ ենք խմելու Բաքվում»՝ մոռանալով այն մարդու ճակատագրի ու նրա բանակի փախուստի մասին, ով հայտարարել էր, թե «իր ոտքերը լվանալու է Սեւանա լճում»:

Ո՛չ, ես Բաքվում թեյ խմելու ցանկություն չունեմ, ես ցանկանում եմ իմ բոլոր հարեւանների հետ ապրել հաշտ, խաղաղ եւ թեյ խմել իմ շատ սիրած ու հարազատ, ինձ համար աշխարհի ամենագեղեցիկ Գորիս քաղաքում:

Ապրիլյան քառօրյայի դասերը չսովորած՝ կանգնեցինք «Սասնա ծռերի» առաջադրած ներքաղաքական խնդրի լուծման առաջ: Նրանից մեր ձեռքով արյուն հեղվեց, եղավ ծեծ ու

էջ 5

Բարության եւ մանկության մոլորակը

Գորիսի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատությունը քաղաքի ամենամեծ մանկապարտեզն է, որտեղ հաճախում է 260 երեխա: Այն գործում է 1982թ. կառուցված եւ յոթ խմբի համար նախատեսված երկհարկանի տիպային շենքում:

2009թ. «Փրկենք երեխաներին» միջազգային կազմակերպությունը Լինսի հիմնադրամի եւ համայնքի ֆինանսական աջակցությամբ հիմնանորոգել է մանկապարտեզի շենքը եւ ապահովել որոշակի գույքով ու մեթոդական գրականությամբ:

Մանկապարտեզի ղեկավարը եւ մանկավարժական կազմը 2008թ. վերապատրաստվել են «Փ.Ե.» միջազգային կազմակերպության «Մանկությունից դպրոց» ծրագրի սահմաններում, իսկ 2010թ.՝ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտում:

Մանկապարտեզի դաստիարակ Սվետլանա Թումանյանը 2006 եւ 2013 թվականներին «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի մարզային փուլում ճանաչվել է հաղթող: Իսկ ինքը՝ տնօրեն Ժասմենա Խաչատրյանը, 2007թ. պարգեւատրվել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ոսկե հուշամեդալով:

Այստեղ աշխատում է մի համախմբված ու փորձառու կոլեկտիվ, որի նպատակն է երեխաների մանկությունը վերածել կյանքի ամենաերջանիկ պահերի: Մանկապարտեզում ամեն թուփ ու քար հարազատ է բոլորին, որովհետեւ լավ են գիտակցում, որ համակողմանի դաստիարակությունը սկսվում է շրջապատից: Եվ զարմանալի չէ, որ այստեղ են տեղափոխել չեչաքարեր, պտեր, մամուռ՝ ստեղծելով բնության մի իսկական պատառիկ: Մանկապարտեզում ստեղծված է նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման չափորոշիչներին համապատասխան գուներ, ուրախ, հետաքրքիր, ջերմ ու բնական միջավայր: Հեքիաթների հերոսները ողջ օրվա ընթացքում ուղեկցում են երեխաներին: Խմբասենյակներում թարմացվել է երեխաների համակողմանի զարգացմանը նպաստող, հետաքրքրությունները բավարարող առարկայական միջավայրը: Երեխաները շատ ընկալունակ են շրջապատի նկատմամբ, ուստի մանկապարտեզի ամբողջ կահավորանքը նպաստում է երեխաների գեղագիտական դաստիարակությանը եւ էսթետիկական ճաշակի զարգացմանը: Մանկապարտեզն ունի գործածության համար երաշխավորված բավարար քանակությամբ ուսումնամեթոդական գրականություն, ձեռնարկներ, ուղեցույցներ, մանկական գրականություն, ամսագրեր, սկավառակներ: Հաճախակի կազմակերպվող միջոցառումները տոնական տրամադրություն են առաջացնում երեխաների եւ ծնողների մեջ, օր օրի նոր գույներ ավելացնում բարու եւ մանկության այս մոլորակի գու-

էջ 6

Ազնվամորու փառատոնը՝ զարկ հատապտղի արտադրությանը

Հացավանի գողտրիկ «MJA Resort» հանգստյան գոտին լցվել էր ազնվամորու բույրով ու պատկերներով: Փառատոնն այստեղ էր հավաքել ազնվամորու արտադրությամբ զբաղվող սյունեցիներին եւ բոլոր նրանց, ովքեր սիրում են ճաշակել նրբահամ այս հատապտուղը: Իրենց տաղավարներով ներկայացել էին Սիսիանի տարածաշրջանի Աշոտավան, Հացավան, Թասիկ, Տոլորս, Բնունիս, Կապանի տարածաշրջանի Դավիթբեկ եւ Եղեգ համայնքների արտադրողները:

9-ամյա Անգելինան իր ամենասիրելի հատապտուղը՝ ազնվամորին է պատկերում թղթին, հետո իր հասակակից՝ նկարչության մրցույթին մասնակցող մյուս երեխաների հետ կշրջի տաղավարներով՝ մասնակցելու համտեսին: Թարմ ազնվամորուց մինչեւ հյութեր, կոմպոտներ, մուրաբաներ, ժելեներ, տորթեր ու տարաբնույթ աղանդերներ... Փառատոնը կրում էր «Հյուրասիրում են սյունեցիները» խորագիրը, համեղ համտեսը բոլորի համար էր:

«Մալինա ենք բերել, ռուլետ, տորթ, մեր այգու բարիքներից ենք հավաքել , բերել հետներս, - ասում է Եղեգ համայնքը ներկայացնող Շուշանիկ տատը, - **մալինան էլ 91թ.-ին՝ որ Գետաշեն գյուղը բռնագաղթել ա, մեզ հետ արմատներով բերել ենք, աճեցրել մեր այգիներում»:**

Աշոտավանի համայնքապետարանի աշխատակից Անուշ Գեւորգյանի խոսքով՝ աշոտավանցիներից շատերն իրենց հիմնական եկամուտը ստանում են ազնվամորու տնկարկներից: Պարարտանյութ չեն օգտագործում, դրա համար էլ գնորդների պակաս չի լինում: **«Այսօր հյուրասիրում ենք,** - ասում է, ժպտում, - **շատ համեղ է, շատ օգտակար՝ հատկապես մրսածության ժամանակ»:**

Փառատոնը նախաձեռնել է «Վորլդ Վիժն Հայաստան» բարեգործական կազմակերպությունը: Նպատակն է՝ աջակցել ազնվամորու արտադրության ընդլայնմանը տարածաշրջանում, հնարավորություն տալ արտադրողին իրացման նոր շուկաներ գտնելու:

«Որոշեցինք կազմակերպել նման մեծամասշտաբ միջոցառում՝ փառատոն, որպեսզի պոտենցիալ գնորդներ հրավիրենք, հնարավորություն տանք Սյունիքի մարզի մեր արտադրողների խմբերին իրենց աճեցրած օրգանական ազնվամորին հանել ավելի մեծ շուկա», - տեղեկացնում է «World Vision» կազմակերպության Սյունիքի ծրագրերի ղեկավար Լենա Կարապետյանը: Նրա խոսքով՝ ամեն ինչ սկսվել է Աշոտավան համայնքից, որտեղ արդեն երկու տարի կազմակերպությունը տնտեսական զարգացման ծրագրերի շրջանակում ազնվամորու մշակությանն առնչվող դասընթացների, նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով նպաստում է տեղական արժեշղթայի զարգացմանը: Հաղթանակի ձգտող աշոտավանցի կանանց «Վիկտորիա» խմբի օրինակն արդեն վարակիչ է դարձել սյունիքյան մի շարք այլ համայնքներում: Հիմա ազնվամորու մշակությամբ զբաղվող խմբեր են ձեւավորվում նաեւ Սիսիանի տարածաշրջանի Թասիկ, Տոլորս, Բնունիս, Կապանի տարածաշրջանի Սյունիք, Դավիթբեկ եւ Եղեգ համայնքներում:

«Մյուս մշակաբույսերի մշակությունը, անասնապահությունը մեզ մոտ էֆեկտիվ չեն. արոտավայրեր չունենք, բերրի հողեր չունենք: Հատկապես ազնվամորին կանայք կարողանում են մշակել, իսկ Աշոտավանում շատ ընտանիքների հոգսը հենց կանանց ուսերին է, – ասում է արտադրողների «Վիկտորիա» խմբի անդամ Վիկտորյա Խաչատրյանը: – **Կողքի համայնքներում էլ ենք տարածել ազնվամորու մշակությունը, որ կարողանանք մեծ շուկաներում հանդես գալ, թե չէ ընդամենը 30տ մալինա ունենալով՝ մենք չենք կարող մեծ շուկաներ գրավել: Այս պահին իրացման խնդիր չունենք, մեզ ծավալներ են պետք»:**

Փառատոնային ողջ օրը հագեցած էր ձեռքի աշխատանքների, ինժեներական լաբորատորիաների շաղափային հաստոցների արտադրանքի ցուցահանդես-վաճառքներով, երգ-երաժշտությամբ, ազգային պարերով, լարախաղացի կատարումներով, մրցույթ-խաղարկություններով ու մրցանակներով:

Իրենց ելույթներով փառատոնին շուք հաղորդեցին Սիսիանի Համո Սահյանի անվան մշակույթի կենտրոնի ժողգործիքների համույթը, Սիսիանի մանկական արվեստի դպրոցը, «Արեգ» եւ «Գրանդ» պարային համույթները:

ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Արծաթի հանքավայրի գաղտնիքները

Կապանի լեռնահարստացման կոմբինատի հինգ աշխատակից մեկ շաբաթ անց են կացրել Հեռավոր Արեւելքում՝ Մագադանի տարածաշրջանում, եւ կատարել են փորձի փոխանակում Դուկատում աշխատող իրենց գործընկերների հետ, որը հանդիսանում է արծաթի խոշորագույն հանքավայրը Ռուսաստանում:

«Քանի որ Դուկատն իր երկրաբանական կառուցվածքով եւ հանքավայրի կառավարման ու վերամշակման տեսանկյունից շատ նման է մեր հանքավայրին, ուստի որոշեցինք ուղեւորվել հենց այնտեղ», – ասում է հանքային աշխատանքների գծով գլխավոր ինժեների տեղակալ Արթուր Ալավերդյանը:

Արծաթի հանքավայրերի շարքում Դուկատն իր խոշորությամբ աշխարհում զբաղեցնում է երրորդ տեղը, ինչպես նաեւ հանդիսանում է արծաթի խոշորագույն հանքավայրը Ռուսաստանում եւ «Պոլիմետալի» առաջատար ձեռնարկությունը: Հանքավայրը Դուկատի հանգույցի մաս է կազմում, որի շրջանակներում հանքավայրից տեղափոխված հանքաքարը վերամշակվում է անմիջական հարեւանությամբ գտնվող երկու գործարանում:

Դուկատի հանքավայրի մասին խոսելիս հաճախ օգտագործում են հետեւյալ բառերը. «առաջին անգամ», «խոշորագույն», «առաջադեմ տեխնոլոգիաներ»: 2016թ. երկու եռամսյակում տարված աշխատանքների արդյունքների համաձայն՝ Դուկատում արդյունահանվել է 802 հազար տոննա հանքաքար: Իսկ հանքաքարի ընդհանուր ծավալը, որն արդյունահանվել է հանքավայրի շահագործման ամբողջ ընթացքում, գնահատվում է միլիոնավոր տոննաներով:

Չնայած իր հարուստ պաշարներին՝ հանքաքարը հեշտությամբ չի տրվում հանքագործներին: Հանքաքարն արդյունահանելու համար անհրաժեշտ է կազմակերպել հանքի բոլոր ստորաբաժանումների ճշգրիտ եւ համակարգված աշխատանքն ու կիրառել հանքարդյունաբերական հուսալի սարքավորումներ: Հանքավայրում շահագործվում է Կոլիմի միակ երկաթուղին, կիրառվում են փոքր չափի սարքավորումներ՝ բարակ հանքերակները հորատելու համար, հեռակառավարվող հանքային տեխնիկա, լիցքավորող-խառնիչ

էջ 6

Մի՞թե հանրապետության գյուղնախարարությունը՝ իր անասնաբուժական ծառայությունով, անզոր է պայքարելու դաբաղ եւ ծաղիկ հիվանդությունների դեմ

Օգոստոսի 7-ին՝ անասնապահի օրը, Իշխանասարի փեշին հյուրընկալվել էինք ֆերմեր Արման Ադամյանին

Առավոտ-առավոտ գնում ենք Պինջարուտ: Այն մեծ Իշխանասարի ստորոտում է: Ճանապարհը, որ խորդուբորդ է, երկու կողմից պատսպարվել է մարդաբոյ կանաչի մեջ: Իսկ լորերը մեկը մյուսին հերթ չտալով՝ ասես մեզ «ուղեկցում» են Պինջարուտ: Ահա եւ այն: Իսկապես որ Պինջարուտ: Լիքը-լիքը եղինջ կա այստեղ՝ արդեն ծաղկած ու մարդաբոյ: Եղինջի բուրմունքը խառնվելով կանաչ խոտի բույրին՝ առավոտ-առավոտ խուտուտ է տալիս մեր քիմքը: Սարվորների համար սա արդեն սովորական է դարձել: Արման Ադամյանն ասում է՝ սա իմ պապենական յայլաղն է: Անասունների խմելու ջրի հարցը լուծելու համար 2.5 կմ խողովակ է շարել:

Արմանը երիտասարդ ֆերմեր է: Ամուսնացած է: Ունի երկու տղա եւ երկու աղջիկ: Սկզբից զբաղվել է ոչխարաբուծությամբ: 3000 գլուխ ոչխար է ունեցել: Բուրդը խուզում էր, բայց...

- *Բուրդ ուզող էլ չկար, նույնիսկ անվճար: Չորս տոննա բուրդ թափել եմ սիլոսի հորերը,* - ցավով ասում է Արմանը: Բացի դրանից, ոչխար պահելն էլ իր դժվարությունն ունի: Որտեղ ոչխար, այնտեղ գայլն անպակաս է: Սա աքսիոմա է: Գելխեղդ շուն-մուն սուտ է: Շները միայն զգուշացնում են գայլերի հայտնվելու մասին, դու պիտի դրանց հախից գաս: Գայլերը շներից չեն վախենում, շների հաչոցից ուղղակի դրանց զահլան գնում է: Մի անգամ գայլերը «ցունամի» արեցին եւ հոտիս հերն անիծեցին: Խոշոր եղջերավոր անասուն պահելն էլ իր դժվարությունն ունի: Ամռանը մեր՝ Գորիսի սարերում եմ պահում անասունները, աշնանն էլ քշում եմ Արցախ: Աշուն էր, եւ մենք Արցախում էինք: Խոտ չկար, որ անասուններն ուտեն: Ստիպված մոշենու տերեւներն էին ուտում: Մեկ էլ հայտնվեցին ոստիկանները: Այ քեզ զարմանք. մի՞թե մոշենու տերեւների համար միլիցիա է գալիս վրադ:

- Յայլաղային շրջանում երեւի հե՞շտ է անասուն պահելը, - հարցնում եմ Արմանին:

- Հեշտ է, եթե հիվանդություն չլինի: Հիմա երկու անուն հիվանդություն՝ մեկը մյուսին չզիջելով, վրա են տվել անասուններին: Մեկը ծաղիկ է կոչվում, մյուսը՝ դաբաղ: Հա, բան չունեմ ասելու, դաբաղ հիվանդության դեմ պետպատվերով պատվաստում է կատարվել: Բայց դա էլ չի օգնում: Դաբաղն անասունի մեջքը կոտրում է: Անասնաբույժին հարցնում եմ՝ էլ պատվաստման արդյունքը ո՞րն է, որ դաբաղը պիտի չոքացնի անասունին, համ էլ՝ մեզ: Գիտե՞ս ինչ, ասում է անասնաբույժը, ինը տեսակի դաբաղ կա, ամեն մի դաբաղն էլ քսանմեկ ենթատեսակ ունի: Խեղճ անասուն, խեղճ անասնապահ... Արի ու դրանցից գլուխ հանի: Դաբաղը քիչ է, ծաղիկ հիվանդությունն էլ ավելացել է: Ծաղիկ հիվանդության դեմ վակցինա կա, բայց տուփի վրա գրված է, որ այն այծերի եւ ոչխարների համար է նախատեսված, իսկ մենք սրսկում ենք կովերին: Դրա համար էլ արդյունք չենք ստանում: Անասնաբույժը զանգել է թե՝ մի

բշտիկ բեր ծաղիկով հիվանդացած անասունից, ուսումնասիրենք: Այ տնաշեներ, մինչեւ հիմա ի՞նչ գործի եք, որ նոր եք բշտիկ ուզում: Մինչեւ ուսումնասիրեք, մենք էլ, անասունն էլ կվերջանանք... Դեռ բախտներս բերել է, որ հիմա է անասունը ծաղիկ հիվանդությամբ տառապում, որովհետեւ հիմա խոտը փափուկ է, չոր չէ, խեղճ անասունը գոնե կարողանում է մի քիչ որոճալ:

Մինչ Արմանը խոսում է, մի փոքրիկ, գեղեցիկ հորթուկ գետնին ընկած մաքառում է իրեն պատուհասած հիվանդությունների դեմ: Հորթուկին ե՛ւ դաբաղն է խեղճացրել, ե՛ւ ծաղիկ հիվանդությունը: Իսկ հորթուկն ընդամենը 1.5 ամսական է: Թե ինչքան կծգի, հայտնի չէ:

Անասնապահական մթերքների իրացման հարցով եմ հետաքրքրվում:

- Բոլորիս ցավոտ տեղին կպար, - ասում է Արմանը, - ի՞նչ մթերում: Թե եղունգ ունես, գլուխդ քորի: Մասիսում մթերման ձեռնարկություն են բացել: Գորիսից անասունները հասցնում ենք Մասիս: Մթերողներից մեկը տեսար ասում է՝ անասունի լարդը հիվանդ է, կամ ասում է՝ երիկամը վնասված է: Բա որ այդ անասունը հիվանդ է, ինչպե՞ս է գիրացել, քաշ հավաքել: Այնպիսի բաներ են մոգոնում եւ 50 կիլոգրամանոց անասունդ դարձնում են մի հնդկահավի քաշ: Կամ ասում են՝ անասունդ թոքերի կպում ունի: Դե եկ վարդապետ ու մի խելագարվիր: Յամեր ունե՞մ, որ անասունին յամերով անցկացնեմ, որ իմանամ, թե ինչ կպում ունի: Ամեն հնարքի այդ անաստվածները դիմում են, որ անասունիդ քաշը, մսի որակն իջեցնեն, որ դու չնչին կոպեկներով տուն վերադառնաս: Իսկ այդպես նրանք ոչ միայն անասունի վիզն են կտրում, այլեւ՝ անասուն պահողի...

- Թեւ ու թիկունք չունե՞ք՝ հանձին պետության, - հարցնում եմ Արմանին:

> *- Պետության արածը չի երեւում, տեսանելի չէ՝ կոնկրետ գործերով: Խոտ գյուղի մոտ անասնաշուկա են բացել: Թող մեկն ասի՝ մի ոչխար կամ մի կով է վաճառել այդտեղ: Ո՞րն է այդ կառույցի իմաստը, չեմ հասկանում:*

Եվ առավոտ-առավոտ իր մեջ կուտակված մտահոգություններն արտահայտում է Արմանը: Դա միայն իր դժգոհությունը չէ, բոլոր անասնապահների ցավն է: Այդ պահին Արմանը դարձել էր բոլոր անասնապահների հավաքական կերպարը:

- Մարդն աշխատում է, բարիք ստեղծում, բայց իր ստեղծածի ձեռքին կրակն է ընկնում: Մթերող չկա: Այս ու այն կողմից եկողներն էլ կշեռքից են խուսափում...

Եվ թաշկինակը հանելով՝ սրբում է ճակատը: Այսինքն՝ տաք է: Հենց այդ պահին Ռեդիկ Հայրապետյանը, ով հիմա ժուռնալիստիկայով է զբաղվում եւ մեր թիմի անդամն է, թե՝ մրսում եմ, մի շոր տվեք հագնեմ: Արմանը ժպտում է ու դառնալով Ռեդիկին ասում՝ «Տկլորը գնաց սար, սարի անունը խայտառակ արեց»: Բոլորս լարվածությունից թոթափված՝ ծիծաղում ենք: Ռեդիկն էլ թե՝ ես չեմ մրսում, թոքերս են մրսում: Էլի ծիծաղում ենք: Չգիտենք՝ կատակո՞ւմ է, թե՞... Բայց եւ այնպես, Ռեդիկին տաք շոր տվին: Հագավ ու թե՝ էս տղամարդուն մի կինը քիչ է, երկուսն է պետք: Արմանը չի պատասխանում, ոչ դժգոհում է, ոչ էլ... Մինչ մենք կհասկանայինք Արմանի մոտեցումն այդ հարցում, կինը՝ Էմման, վրա է տալիս՝ մի կինը բավական է, երկրորդին ես չեմ հանդուրժի:

- **Դու առաջին կնոջ տիտղոսը կունենաս**, - ասում եմ նրան:

- Տիտղոս-միտղոս ինձ պետք չէ: Դեմ եմ ու վերջ:

Եվ որպես մոր պաշտպան ու մոր հետ համաձայնության նշան՝ երեխաները գալիս են ու շուլալվում նրան: Էմման Գորիսի Շալունց ազգի աղջիկ է, Արմանն էլ Գորիսի տարածաշրջանի Հարժիս գյուղից: Մեկ-մեկու հանդիպել են սարերում: Հիշում եմ հանրահայտ երգի տողերը՝ ես չգիտեմ թե ինչպես, դու չգիտես թե ինչու, հանդիպեցինք մեկմեկու... Եվ նրանց սերը ծնվեց սարում: Յասամանի ծառի տակ չեն նստել կամ ժամադրվել: Այլ՝ երփներանգ ծաղիկների ծով սարում, եւ զեփյուռն է եղել նրանց սիրո վկան ու չասված խոսքերի թարգմանը: Գոհ է Էմման, որ Արմանի նման աշխատասեր ամուսին ունի, ամուսին, ով ընտանիքի հարգը լավ գիտի, ով կնոջ համար երկնքից աստղեր էլ ցած կբերի: Ու ես կարծես թե հասկանում եմ Էմմայի պոռթկման իմաստը՝ 2-րդ կնոջ հարցում. նա իր բաժին աստղերից ուրիշին բաժին չի ուզում հանել:

- Հիասթափվում եմ երբեմն, - ասում է Արմանը, - իմ ընտրած ճանապարհը դժվար է, ամեն քայլափոխի դժվարություններ, նահանջներ, տհաճ անակնկալներ...

Տղաները գալիս ու կանգնում են կողքին, ասես ասելով՝ մի վիատվիր հանուն մեզ: Արմանը շոյում է զավակների գլուխը, ասես ուզում է ասել, որ հանուն նրանց՝ ամեն ինչի կդիմակայի:

- Բռնածս ճանապարհը քարքարոտ է, - շարունակում է նա, - եւ չգիտես այդ ճանապարհը քեզ ուր է հասցնելու: Մշուշոտ է ամեն ինչ: Բայց եւ չես հանդուրժում, որ վատ մտքերդ պաշարեն քեզ, սթափվում ես եւ ինքդ քեզ հույս տալիս՝ ամեն ինչ լավ է լինելու: Կարեւորն այն է, որ երեխադ սոված չէ, երեխադ ուրիշից կոնֆետ չի խնդրում, ես ուրիշից ծխախոտ չեմ խնդրում, կինս ուրիշից հաց չի խնդրում պարտքով կամ մի աման ալյուր կամ մի պտղունց աղ: Փառք աստծո: Ընտրածս ճանապարհն անգործությունից լավն է, պատերի տակ նստելուց ու բողոքելուց ոչինչ չի ստացվի: Համեստ մարդ եմ, եղածով բավարարվող: Էլիտար շենքերում ապրել չեմ ուզում, դուբայներում չեմ ուզում ապրել կամ հանգիստս անցկացնել, երեխաներս կարուսել չեն ուզում, Ֆելոյի բարը չեն ուզում, նրանք սարի շնկշնկան հովն են ուզում, գառների մայունով, հորթերի բառաչով բացվող լուսաբացն են ուզում: Միայն ուզում եմ, որ պետությունը մեզ թիկունք կանգնի, նորմալ մթերվի մեր արտադրանքը՝ իրական գներով: Թե չէ մի շիշ ջերմուկն արժե 220 դրամ, 1լ կաթը գործարանները վերցնում են 110 դրամով: Թե լուսին էլ թռչես, լուսնի վրա էլ տուն կառուցես, մեկ է, մարդու իրական տեղը երկիր մոլորակում է, այս երկրագնդում: Եվ թող հանուն մարդկային գոյի՝ պատկան մարմինները, իշխանության վերին էշելոններում նստած պաշտոնյաները կաբինետային որոշումներ չկայացնեն: Կանգնեն մեր կողքին ու լսեն մեր խոսքը, որ գյուղատնտեսությունը զարգանա:

Արման Ադամյանը միայն իր ու ընտանիքի մասին չէ, որ մտածում է: Նա տեղային մտածողության տեր մարդ չէ: Նա մտածում է հող հայրենին շենացնելու մասին, որովհետեւ աշխարհի հիմքը ցորեն հացն է եւ ցորեն հացին չեն կարող փոխարինել արհեստական ճանապարհով ստացված միսը, հացը, մյուս մթերքները: Բնական միջավայրն այն հենքն է, որ հնարավորություն է տալիս արտադրելու էկոլոգիապես մաքուր սնունդ: Իսկ դրա համար պետք է ընդամենը լուծել գյուղատնտեսական մթերքների իրացման խնդիրը: Իսկ դա նշանակում է նաեւ, որ հայոց ազգն առողջ սնունդ կունենա, հայոց բանակն առողջ տղաներով կհամալրվի: Թե չէ, այլ երկրներից բերված գոմեշի միսը...

Արմանի հայացքը թափառում է ինչ-որ տեղ: Ինչ-որ բան է նա փնտրում: Գտավ: Իր հորթերն են, ու դառնալով մեզ ասում է՝ կխտարի ձագեր են, կխտարի...

Հպարտություն զգացի նրա ձայնի մեջ: Գորովանք՝ իր կխտարի ձագերի հանդեպ: Գորովանք ու հպարտություն: Այսինքն՝ արարման իմաստ, արարման արդյունք: Այդպիսին է հարժիսցի Արման Ադամյանը, մարդ, ով մտածում է մարդկային գոյի մասին եւ ուզում է, որ մարդկային գոյն առողջ արմատներ ունենա....

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՎԱԼԵՐԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ. «Եթե սահմանին կանգնած զինվորը զգոն չլինի, կարգապահ ու մարտունակ չլինի, բնականաբար, հակառակորդն առիթից կօգտվի»

էջ 1

բանակային կորպուսի արդեն նախկին հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը նշանակվել է ավելի պատասխանատու պաշտոնում՝ այսպես ասած մեզ թողնելով լավ ժառանգություն: Եվ իմ խնդիրն է ոչ միայն պահել այդ ամենը, այլեւ ժամանակին համահունչ զարգացնել, քարը քարին դնել: Հատկապես բանակաշինության բնագավառում նորմալ ղեկավարի խնդիրը նախորդի թողածն ավելի զարգացնելն է: Զորամիավորման մեջ իրադրությունը կայուն է, զորամասերը պատրաստ են կատարել իրենց առջեւ դրված մարտական խնդիրները, մի խոսքով՝ Այունիք-Վայոց ձոր՝ մեր ենթակայության տակ գտնվող սահմանների բնակիչների անդորրն ու խաղաղ արարումն ապահովված են:

– Ապրիլյան իրադարձություններից հետո խոսակցություններ են շրջանառվում, որ զորամասերում, զորամիավորումներում կառուցվածքային փոփոխություններ են տեղի ունենում: Արդյո՞ք դրանք համապատասխանում են իրականությանը եւ արդյո՞ք դրանք քառօրյա պատերազմի դասերից բխող քայլեր են:

– Ոչ մի արտառոց երեւույթ չի կատարվում, բնականոն եւ օրինաչափ փոփոխություններ են, այսպես ասած, պլանային միջոցառումներ, որ իրականացնում է ՀՀ զինված ուժերի ղեկավար կազմը: Բանակաշինության գործընթացում ենթադրվում են նմանատիպ զարգացումներ, եւ դրանք բնավ կապ չունեն ապրիլյան իրադարձությունների հետ:

– Մշտապես խոսակցություններ են լինում, որ, հատկապես գարնանային ձնհալով, մեր ռելիեֆով պայմանավորված, որոշ տեղերում ադրբեջանական դիրքերը երբեմն առաջ են գալիս, կամ մենք ենք մտնում նրանց տարածք, եւ իբր թե հատկապես Սիսիանի բավականին շատ հատվածներում նրանց ուղեկալներն առաջ են եկել պետական սահմանից այս կողմ:

– Նմանատիպ երեւույթ արդեն շուրջ երեք տարի է՝ չկա. հակառակորդը տարվա ոչ մի եղանակի այստեղ չի գերիշխում: Այս երեք տարվա մեջ մեր հնարավորությունները հակառակորդի հետ հավասարեցրել ենք. ինչքան որ իրենք են տիրում գերիշխող բարձունքների, այնքան էլ՝ մենք: Իրադրությունն ամբողջովին շտկվել է: Մեկ կամ երկու դեպք նախկինում եղել է, որ մոտ 300 մետրի չափով ոտքները սահմանից առաջ են բերել, բայց մեր դիրքերն ամրագրված են պետական սահմանին համապատասխան, որեւէ շեղում ներկայումս չի արձանագրվում:

– Նախիջեւանյան հատվածում մեր կատարած այցելության ժամանակ ինժեներական բավականին լուրջ աշխատանքների ականատես եղանք: Առաջնագծի արդիականացումը շարունակա՞ն գործընթաց է:

– Առաջնագծի արդիականացման գործընթացը սկսվել է այն պահից, երբ հայկական բանակի առաջին զինվորը ոտք է դրել այդ սահմանին: Ինժեներական զանազան աշխատանքները, բնականաբար, տարեցտարի կատարելագործվում են: Նպատակը ոչ միայն դիրքերի ամրապնդումն է, այլեւ հայ զինվորի անվտանգությունը, որ իր խրամատում լիարժեք պետք է պաշտպանված լինի հակառակորդի համապատասխան գործողություններից: Սա շարունակական գործընթաց է, որից էլ կախված են մեր սահմանների ամրությունն ու պաշտպանության հուսալիությունը:

– Հատկապես ձմռան ամիսներին մարտական հենակետերում բնակլիմայական պայմանները որոշակի դժվարություններ չե՞ն ստեղծում զինծառայողի համար. չէ՞ որ խոսքը մոտ 3000մ բարձունքին գտնվող հենակետերի մասին է:

– Մեր զինծառայողներն ամենաբարձր կետերում անգամ անտրտունջ կատարում են իրենց մարտական հերթապահությունը: Զինվորի համար բացարձակ նշանակություն չունի՝ ամա՞ռ է, թե՞ ձմեռ, որովհետեւ նա գիտակցում է, որ պաշտպանում է իր ժողովրդին, որը սահմանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա է եւ պետք է կարողանա արարել, հանգիստ գուխը դնել բարձին:

– Բացախոսությունը, հրապարակայնությունը, իհարկե, օրենքի սահմաններում, միշտ չէ, որ ցանկալի է եղել շատ հրամանատարների համար: Վերջին մեկ-երկու տարում այդ առումով բավականին փոփոխություն կա: Ինչպե՞ս եք վերաբերվում հրապարակայնությանը:

– Այսօր ՀՀ զինված ուժերի հրամանատարության աշխատանքների կարեւոր ուղղություններից մեկը բանակ-հասարակություն կապի ամրապնդումն է: Եթե այն փակենք, այդ կապը կթուլանա. բանակը հասարակության առաջ պետք է բաց լինի՝ իհարկե, հաշվի առնելով որոշ հանգամանքներ եւ հատկապես պետական գաղտնիքի մասին օրենքը: Եթե խոսքը մարտունակությանը, մարտական պատրաստականությանը, զենքի կիրառմանը եւ մի շարք այլ հարցերի է վերաբերում, պետք է սահմանափակ լինել: Բայց երբեմն որոշ հրամանատարներ, զինծառայողներ ավելորդություններ են թույլ տալիս, իսկ որոշ լրատվական միջոցներ էլ, օգտվելով խոսքի ազատություն ասվածից, հրապարակում են տեղեկություններ՝ թշնամու ջրաղացին ջուր լցնելով: Հատկապես լրատվական միջոցներն այս հարցում զգոն ու զուսպ պետք է լինեն, պրոֆեսիոնալ մոտեցում ցուցաբերեն, բաց լինելուց զատ՝ նաեւ մտածեն պետական շահի, բանակի ամրության, կարգապահության, զգոնության ու մարտունակության մասին:

– Բավականին բարձր պաշտոն եք ստանձնել՝ զորամիավորման հրամանատար, զինվորի, նրա ծնողի համար հասանելի՞ եք, թե՞...

– Կարծում եմ՝ ծառայության ընթացքում յուրաքանչյուր հրամանատար նաեւ զինվորի ծնողն է: Պատրաստ եմ՝ օրվա որ պահին ցանկանան, անձնական թե ծառայողական հարցով, յուրաքանչյուր ծնողի ընդունել, լսել նրա մտահոգությունը եւ հնարավորության դեպքում լուծում տալ նրա մտահոգություններին:

– Ազգովի հիացած ենք 18 տարեկան հայ զինվորի՝ մեր ազգի համար ճակատագրական օրերին ունեցած պահվածքով: Բոլորս էլ գիտակցում ենք, որ սա ռազմահայրենասիրական դաստիարակության պտուղների հավաքում էր: Ի չիք դարձավ այն մտավախությունը, որ երբեմն ունենում էինք երիտասարդ սերնդի վերաբերյալ:

– Մի փոքր անգամ չէինք կասկածում, որ եթե պատերազմական իրավիճակ ստեղծվի, 18 տարեկան հայ երիտասարդն իր հերոսությամբ, քաջությամբ ու առնականությամբ նույն կերպ կդրսեւորվի, ինչպես 1990-ականներին: Մեր երիտասարդների մեջ խոսում է հայի գենը, արիական ցեղի գենը, որը չի մեռել եւ իրավունք էլ չունի մեռնելու: Ապրիլյան իրադարձությունները ցույց տվեցին, որ ՀՀ-ում ռազմահայրենասիրական դաստիարակությունը ճիշտ ճանապարհին է, եւ այն հիմնականում սկսվում է դպրոցից: Բայց ես այն կարծիքին եմ, որ ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսել ոչ միայն մանկապարտեզից, այլեւ յուրաքանչյուր օջախից: Երեխային պետք է դաստիարակել հայրենասիրական ոգով՝ անկախ երկրում առկա տարբեր հարցերից: Եթե կա երկիր, հայրենիք, ապա հայրենասիրությունն առաջնային տեղում պետք է լինի, եւ միայն այդ դեպքում կդառնանք անպարտելի, կծնվեն բազում հերոսներ:

– Ապրիլյան պատերազմը ցույց տվեց, որ ուրիշ ժամանակներ են, եւ ավելի շատ գրագետ զինվորականների կռիվ է, արդիական զինտեխնիկայի գրագետ կիրառման մրցակցություն: Արդյո՞ք մոտ ենք գրագետ, պրոֆեսիոնալ գործելակերպին:

– Մեր բանակում ուսուցման պրոցեսը, մարտական պատրաստվածությամբ զբաղվելը մշտական ու շարունակական գործընթաց է, ժամանակի պահանջներին համահունչ: Քառօրյա պատերազմը ցույց տվեց, որ հակառակորդը չկարողացավ իր առջեւ դրված խնդիրները լիարժեք կատարել, եւ մեր զինվորները նրան դիմագրավեցին ու հերոսության դասեր տվեցին: Հայ զինվորը կարողացավ ուղղաթիռ, տանկ, այլ տեխնիկա խոցել, մեր հրետանավորների ճիշտ գործողությունները զսպեցին հակառակորդին եւ ստիպեցին հրաժարվել իրենց ծրագրերից: Սպայական կազմի հմուտ կառավարման, գրագիտության շնորհիվ մեր հակառակորդը, ունենալով բավականին լուրջ ուժեր, զրոյական տոկոսի խնդիրներ լուծեց (դա է ասում ռազմագիտությունը): Առհասարակ ինչքան արդիականացվում է զինտեխնիկան, այնքան ուսուցման պրոցեսն ավելի լուրջ հիմքերի վրա է դրվում: Եվ մենք ձգտում ենք դրան համահունչ քայլել:

– Քաղաքային, գյուղական համայնքների հետ համագործակցության ավանդույթներ են ստեղծվել: Ինչպիսի՞ն կլինեն հետագա հարաբերությունները նրանց ղեկավարների, բնակչության հետ:

– Գեներալ-մայոր Մակարյանը բավականին լուրջ հիմքեր է դրել տարածաշրջանի համայնքների հետ շփման ու համագործակցության առումով, որն ավելի ակտիվորեն կշարունակենք: Բանակը սերում է ժողովրդից եւ չպիտի կտրվի նրանից: Բանակն ավելի պարտավորված է իրեն զգում, երբ այդ կապը սերտ է լինում: Ժողովուրդը վստահում է հայոց բանակին, իսկ բանակն էլ զգում է այդ վստահությունը:

– Ձեր ողջերթի խոսքն Անդրանիկ Մակարյանին:

– Գեներալ Մակարյանը մեր զինված ուժերի գրագետ, պրոֆեսիոնալ զինվորականներից է, եւ ինձ բախտ է վիճակվել նրա հետ ծառայել մոտ յոթ-ութ տարի: Չորրորդ բանակային զորամիավորումում իր ծառայությունն անցկացնելու ժամանակ նա ակտիվ գործունեություն է ծավալել, միշտ առաջ շարժվելու նախաձեռնությամբ հանդես եկել: Նրա գլխավոր արժանիքներից մեկն էլ սեփական գիտելիքները, փորձը փոխանցելն է: Նոր պաշտոնը, որ ստանձնել է, առավել պատասխանատու եւ ընդգրկուն է, եւ համոզված եմ՝ նա պատվով կկատարի իր առջեւ դրված խնդիրները, ինչի համար ունի համապատասխան ունակություններ եւ հատկանիշներ, եւ որ, ամենակարեւորն է, ձգտում: Հաջողություններ եմ մաղթում եւ՝ առա՛ջ, առա՛ջ, ինչպես ինքն էր ասում բոլորիս:

– Մենք նույնպես միանում ենք Ձեր մաղթանքներին, մեկ անգամ եւս շնորհավորում Ձեզ ու պարոն Մակարյանին, ցանկանում հաջողություններ եւ խաղաղ ծառայություն:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կապանի զինկոմ Լեոնիդ Գրիգորյանի շնորհավորանքը Վալերիկ Քոչարյանի՝ ՀՀ զինված ուժերի 4-րդ բանակային զորամիավորման հրամանատար նշանակվելու առթիվ

1996 թվականին, ստանձնելով Կապանի զինկոմի պաշտոնը, փոխարինեցի գնդապետ Վալերիկ Քոչարյանին: Որպես պրոֆեսիոնալ սպա՝ նա առաջիններից էր, ով հայրենիքի համար օրհասական պահին՝ 1990-ական թվականների պատերազմին, վերադարձավ հայրենիք՝ ձեռք բերած գիտելիքներն ու փորձը ծառայեցնելու մեր երկրին ու ժողովրդին:

1992թ. ստեղծված քաոսային իրավիճակում, երբ դեռեւս չէր ձեւավորվել հայոց բանակը, ադրբեջանական ռազմական ագրեսիան լայնամասշտաբ բնույթ էր ստացել, Վալերիկ Քոչարյանը ոչ միայն տեղում համակարգեց զինվորական աշխատանքները, այլեւ ակտիվ մասնակցություն ցուցաբերեց Կապանի սահմանամերձ գոտու պաշտպանության համար մղվող մարտական գործողություններին:

Կապանի զինկոմ աշխատելու տարիներին բավականին հետաքրքիր ավանդույթներ ձեւավորեց, որոնք հետագայում ոչ միայն պահպանեցինք, այլեւ զարգացրինք: Աշխատանքային առողջ կոլեկտիվ էր ստեղծել, որտեղ մինչ օրս էլ բարձր են գնահատում Վալերիկ Քոչարյանի վաստակը:

Հպարտ ենք, որ մեր համերկրացին, աշխատանքային գործընկերն ու մարտական ընկերն արժանացել է զորամիավորման հրամանատարի բարձր կոչման, որ վկայում է նրա մասնագիտական բարձր մակարդակի, իսկական զինվորականի չափորոշիչներին համապատասխանելու մասին: Համոզված եմ՝ դա միանգամայն ճիշտ որոշում էր, որի պտուղները կարճ ժամանակահատվածում տեսանելի կլինեն: Ուրախալի է փաստը, որ հատկապես զորամիավորման ներքին մթնոլորտին, այնտեղ տիրող իրավիճակին ծանոթ մարդն է ստանձնում նմանատիպ պաշտոն, եւ նոր միջավայրին հարմարվելու խնդիր արդեն իսկ չի լինում:

Կապանի զինկոմիսարիատի, տարածաշրջանի ազգաբնակչության անունից շնորհավորում ենք գնդապետ Քոչարյանին՝ նոր նշանակման կապակցությամբ, մաղթում հաջողություններ եւ բարի ծառայություն:

ԱՅՑԵԲԱՐՏ

Գնդապետ Վալերիկ Քոչարյանը ծնվել է 1963թ. մայիսի 17-ին Քաջարան քաղաքում: 1980թ. ավարտել է Կապանի N 2 միջնակարգ դպրոցը, 1984թ.՝ Կիեւի զինվորական բարձրագույն ռազմածովային քաղաքական ուսումնարանը, 2005թ.՝ ՌԴ ԶՈՒ համազորային ակադեմիան, 2011թ.՝ ՌԴ ԶՈՒ ԳՇ ռազմական ակադեմիան:

Ծառայել է ՀՀ ՊՆ Կապանի զինկոմիսարիատում՝ զինվորական կոմիսար, որտեղ ծառայության ընթացքում 1992թ. կազմավորել է ինքնապաշտպանական գումարտակ եւ նրա կազմում մասնակցել Կապան քաղաքի եւ ՀՀ հարավարեւելյան սահմանների պաշտպանությանը:

Ծառայության ընթացքում զբաղեցրել է հետեւյալ պաշտոնները՝ 66823 զորամասում՝ օպերատիվ կառավարման գծով ավագ սպա, 16396 զորամասի օպերատիվ բաժնի պետ-շտաբի պետի տեղակալ, 60369 եւ 54122 զորամասերի շտաբի պետ-հրամանատարի տեղակալ, ՊԲ 59703 զորամասի հրամանատար, 11556 զորամասի մարտական պատրաստականության բաժնի պետ: 2004-2005թթ. ընթացքում սովորել է ՌԴ ԶՈՒ համազորային ակադեմիայում, որից հետո նշանակվել է 11556 զորամասի հրամանատարի տեղակալ: Ծառայել է նաեւ 5-րդ բանակային զորամիավորումում՝ շտաբի պետ-հրամանատարի տեղակալի պաշտոնում: 2010-2011թթ. ընթացքում սովորել է ՌԴ ԶՈՒ գլխավոր շտաբի ակադեմիայում: 2011-2014թթ. զբաղեցրել է 27527 զորամասի հրամանատարի տեղակալի պաշտոնը: 2014թ. հունիսի 25-ից 2016թ. հուլիսի 7-ն ընկած ժամանակահատվածում ծառայել է ՀՀ ՊՆ 27527 զորամասի հրամանատարի տեղակալ-շտաբի պետի պաշտոնում: 2016թ. հուլիսի 7-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է 4-րդ բանակային զորամիավորման հրամանատար:

Ամուսնացած է, ունի չորս երեխա:

Պարգեւատրվել է ՀՀ «Մարտական ծառայություն», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար 1-ին եւ 2-րդ աստիճանի» պետական պարգեւներով, «Մարշալ Բաղրամյան-100», «Անդրանիկ Օզանյան», «Վազգեն Սարգսյան», «Անբասիր ծառայություն 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ աստիճանի», «Դրաստամատ Կանայան», «Ծովակալ Իսակով», «Գարեգին Նժդեհ» գերատեսչական մեդալներով, «ՀՀ ԶՈՒ 20 տարի» հոբելյանական մեդալով, «ԵԿՄ հուշամեդալ»-ով, ԼՂՀ «Մայրական երախտագիտություն», հկ-ների «Հայոց արծիվ», «Հաղթանակ», «Այունյաց արծիվ» մեդալներով:

Սիսիանում 7-րդ անգամ նշվեց Երիտասարդության միջազգային օրը

«Սիսիանն իմ բնօրրանն է, եւ ես եմ նրա վաղվա տերը», «Կա հայ երիտասարդություն, կա մեծ հայրենիք, որը քոնը պիտի լինի վաղը», «Երիտասարդությունն այն փարոսն է, որ լուսավորելու է ապագայի ճանապարհը», «Նորահաս սերնդի մեջ բացառիկ տեղ է գրավում ուսանողությունը՝ մեր վաղվա մտավորականությունը», «Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան, նայի՛ր նրա երիտասարդությանը»... Սիսիանցի երիտասարդների ձեռքին նշված բովանդակությամբ պաստառներ են: Օգոստոսի 12-ն է՝ Երիտասարդության միջազգային օրը: Օրը երիտասարդներինն է, ասելիքը՝ նույնպես:

Մեկ տարի ԱՄՆ-ում կրթություն ստացած, տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ ուսանած ու շփված Աղվան Բախշյանը համոզվել է՝ հայ երիտասարդները շատ ավելի խելացի են, ունակ: Միայն ինքնավստահությունն է պակասում: Ինքն իր ազատ մտածողությամբ, անկաշկանդ պահվածքով ու ակտիվությամբ փորձում է կոտրել կարծրատիպերը, օրինակ լինել հասակակիցների շրջանում:

«Համեմատության շնորհիվ հասկացա, որ հայ երիտասարդությունը շատ ավելիին կարող է հասնել, - ասում է: - *Մեր երիտասարդներն ամաչկոտ են, հենց դա է պատճառը, որ շատ տաղանդավոր երիտասարդներ այդպես էլ չեն բացահայտվում»:*

Աղվանը մեկն է սիսիանցի այն երիտասարդներից, ովքեր ոգեւորությամբ են մասնակցում Երիտասարդության միջազգային օրվա առիթով կազմակերպված միջոցառումներին: Երիտասարդության ուժը համախմբվածության մեջ է՝ համոզված է:

Ինտելեկտուալ, մարզական ու ժամանցային խաղեր, երգի ու պարի մրցույթներ, մատաղի արարողություն... Նախաձեռնությունը Սիսիանի քաղաքապետարանինն է, որ արդեն 7-րդ տարին իր շուրջն է համախմբում ամառային հանգիստը վայելող հարյուրավոր երիտասարդների:

«Երիտասարդների ոգեւորությունը բոլորս ենք նկատում. շատ բարձր տրամադրությամբ են մասնակցում միջոցառումներին, միակ օրն է, որ ուսանողությունն անհամբերությամբ է սպասում: Մենք էլ երիտասարդանում ենք, մեկ օր ապրում երիտասարդական կյանքով, - ասում է համայնքի ղեկավար Աղասի Հակոբջանյանը: - *Մեր նպատակն է նաեւ համախմբել բոլորին. Սիսիանը միասին պետք է շենացնենք, մեր երկիրը՝ միասին զորացնենք»:*

Ինչպես ամեն տարի, այս տարի էլ միջոցառումների մեկնարկը տրվեց Սիսիանի Սիսակ Նահապետի անվան հրապարակում: Երիտասարդները նախ ծաղիկներ խոնարհեցին Համո Սահյանի արձանին, հարգանքի տուրք մատուցեցին Արցախյան պատերազմի զոհերի հիշատակին, այնուհետեւ քահանայի օրհնությամբ ուղեւորվեցին Շաքեի ջրվեժի տարածք:

«Առաջին անգամ չէ, որ մասնակցում եմ, երեւի երրորդ անգամ է: Շատ լավ է անցնում, շատ ուրախ, ընկերներով հավաքվում ենք, ուրախանում: Ես խաղեր եմ լինում, եւ մրցույթներ: Հաճույքով եմ մասնակցում» – ասում է ԵՊՀ ուսանողուհի Վիկտորյա Պետրոսյանը, շարունակում վայելել ջրվեժի հոգեզմայլ տեսարանը:

«Նոր ծանոթություններն ամենակարեւորն են, մարդիկ համախմբվում են, նոր գաղափարներ ու ծրագրեր են ծնվում», - հավելում է «Արեւ» երիտասարդական հկ նախագահ Հրաչ Սինասյանը:

Երեկոյան երիտասարդները կրկին Սիսիանի կենտրոնական հրապարակում էին: Համերգ-դիսկոտեկն ու հրավառությունը տոնական օրվա վերջին՝ ամենաաշխույժ ակորդներն էին:

ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Չկարողացա մնալ անտարբեր

Դիրքորոշում

ԳՐԻՇԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Վետերան ուսուցիչ,
Խորենացու անվան մեդալակիր

էջ 1 ջարդ...

Երկրում կուտակված խնդիրները զենքով լուծելու թշնամին եմ: Սակայն մտահոգված եմ նաեւ այն բանի համար, թե ինչու լուծման այլ ճանապարհներն օտարվել են ժողովրդից: Ինչո՞ւ ժողովրդին պարզ ու շիտակ չբացատրել այն պատճառները, որոնք ծնեցին կամ ծնելու են նոր «Սասնա ծռեր»: Ինչո՞ւ է վերացել սեփական ժողովրդի հետ խորհուրդ անելու ցանկությունը: Չէ՞ որ ժողովուրդն է իշխանության աղբյուրը եւ ոչ թե ժողովրդին հայտնի որոշ սազանդարներ, ովքեր իրենց անձնական շահերից ելնող գնահատականներով ավելի են սրում իրավիճակը:

Երկրում կուտակված խնդիրների լուծման բանալին գտնվում է ժողովրդի մոտ, այդ բանալին է բացելու ազնիվ, արդար ընտրությունների կողպեքը: Իսկ այդպիսի մեկ ընտրությունը հիմք է հանդիսանալու ժողովրդի ուզած Հայաստանը կառուցելու համար:

Ընտրակեղծարարնե՛ր, դուք ավելին եք անում երկրի քայքայման համար, քան նույնիսկ մեր ոխերիմ թշնամիները: Համամիտ եմ երկրի նախագահի վերջերս արտահայտած այն մտքի հետ, որ «իշխանությունները եկող գնացող են... »: Միայն ուզում եմ ավելացնել, որ մնացողը ժողովուրդն է, մնացողը համայն հայության հայրենիք Հայաստանն է:

Քիչ չէին հայրենիքիս համար ապրումներս, հիմա էլ ցավող վերքիս վրա աղ է լցնում տխրահռչակ ռուս քաղաքական գործիչը, պալատամերձ հայտնի ծաղրածուն:

Գուցե գրելու, մտքերս ուրիշների հետ կիսելու ցանկությունս, ատամներիս տակ սեղմելով, մարեի, եթե հայտնի պատգամավորներից մեկը, ժողովրդի ցասումն իբր մարելու նպատակով, չգրեր. «Շատ ուրախ եմ, որ պաշտոնական Մոսկվան Ժիրինովսկու պես չի մտածում»:

Նախ թողնենք, թե ինչպես է մտածում պաշտոնական Մոսկվան: Ինչի՞ց ես շատ ուրախացել, որ նա «թքած ունի Հայաստանի վրա», որ նա զրպարտում եւ ուրիշի ջրաղացին ջուր է լցնում՝ ասելով, թե «այնտեղ արդեն մեկ միլիոն հայ է մնացել»: Ուրախանալու ի՞նչ առիթ ես գտել, երբ նա թուրքերին եւ ազերիներին քսի է տալիս ու ավելացնում. «այլապես նրանց երկու կողմից կջնջեն թուրքերն ու ադրբեջանցիները»:

Չեմ հավատում, որ Խոսրով Հարությունյանը չի հասկացել Ժիրինովսկու խոսքի վերջաբանի իմաստը՝ «նրանք երբեք մեզնից չեն հրաժարվի, քանի որ այդ դեպքում նրանց վերջը կգա»:

Մեր հազարամյա գոյության վերջը երբեք չի գալու: Այսպիսին պետք է լինի մեզնից յուրաքանչյուրի պատասխանն այդ անհավասարակշիռ քաղաքական գործչին:

Գուցե Ժիրինովսկին թուրքերին եւ ազերիներին հաճոյանալու համար ցանկանում է սեպ խրել հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամության մեջ, գուցե հող է նախապատրաստում նոր ապրիլյան պատերազմի համար: Ահա ինչից պետք է զգուշանալ եւ ինչի պետք է պատրաստ լինել:

Հայ ժողովուրդը երբեք հակառուսական տրամադրություններ չի ունեցել. վկան մեր մեծերի գնահատականները, վկան Աբովյանի «Օրհնվի էն սհաթը... », վկան մեր ժողովրդի հավաքական կարծիքը:

Ինչո՞ւ Ժիրինովսկուն դուր չի եկել, երբ մեր ժողովուրդը, մեր իշխանությունը, երկրի նախագահն իրենց դժգոհությունն են հայտնել ռազմավարական գործընկերոջ կողմից՝ լարված տարածաշրջանում մեր հակառակորդին հարձակողական զենք վաճառելու առիթով: Եթե պատճառաբանվում է, թե դա բիզնես է, ապա ինչո՞ւ չտեսնել, որ այդ բիզնեսով ռազմավարական ընկերներից մեկը փող է աշխատում, իսկ մյուսն այդ փողի դիմաց կրում է մարդկային ցավալի կորուստներ:

Մենք իրավունք չունենք չհարցնել, թե ինչու այն միության երեք անդամը, որին անդամագրվել ենք, սպասարկում են Ադրբեջանի շահերը, իսկ մյուսի քաղաքական գործիչներից մեկը «թքած ունի Հայաստանի վրա» այն դեպքում, երբ հաճախ ի վնաս մեր երկրի հեղինակության՝ միջազգային տարբեր ատյաններում սպասարկում ենք Ռուսաստանի շահերը:

Ժիրինովսկիները չեն կարող կտրել ռուս ժողովրդի հետ մեր կապի բազում թելերը, եւ նրանցից չենք հարցնելու, որ մենք ցանկություն ունենք կառավարման մոդելի բարեփոխումներով գնալ դեպի եվրոպական ժողովրդավարություն:

Իմ հայրենակիցնե՛ր, որպես եզրափակիչ, լսե՛ք մեծ բանաստեղծի ուղերձը դեպի ձեզ՝ *«ով հայ ժողովո՛ւրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:*

Միասնական լինե՛նք ոչ միայն սպառնալիքի դեպքում: Միասնական լինե՛նք երկրի հիմքերը խարխլող, բոլոր չարիքների արմատ հանդիսացող ընտրակեղծիքների, ընտրակեղծարարների դեմ պայքարի ժամանակ, միասնական լինե՛նք կոռուպցիայի, հովանավորչության դեմ պայքարելիս:

Անընդհատ փնովելու, ատելություն սերմանելու փոխարեն միասին պահանջատեր լինե՛նք, որ պաշտոնական դիրքը չարաշահողները, երկրի, ժողովրդի հարստությունը թալանողները, հայրենի բնությունն ավերողներն օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվեն եւ կրեն իրենց պատիժը:

Պահանջատեր լինե՛նք, որ կառավարման բուրգից հեռացվեն իրենց պարտականությունները չկատարող, կաշառակեր դիլետանտները: Պահանջե՛նք, որ ստեղծվի ազգային վստահության կառավարություն: Պահանջե՛նք, որ չամայացվի քաղաքական դաշտը եւ ընդդիմությանը չնայվի որպես թշնամի: Ընդդիմությունը մեր թշնամին չէ, ընդդիմությունը մեր ցորենի դաշտի քաղհանն է, իսկ նրան թշնամի տեսնելու դեպքում մի՛ զարմացեք, որ մոլախոտի փոխարեն հաճախ դաշտից կարող է հեռացնել նաեւ ցորենի հասկը:

Միասին եկե՛ք ոչ ասենք զենքով, ծեծ ու ջարդով իշխանափոխություն կատարելու, իշխանությունը պահելու գայթակղությանը:

Վերջին դեպքերից չպետք է ջղաձգվել, վրեժխնդրությամբ չպետք է լցվել: Դա մեզ բոլորիս ուղղված սթափության կոչ էր...

■

Նպատակը զբոսաշրջության զարգացումն է

Օգոստոսի 12-ին Գորիսում տեղի ունեցավ «Սյունյաց ավանդույթներ» փառատոնը: Քաղաքի մանկական զբոսայգում տաղավարներն էին բացել մարզի համայնքները. ցուցադրում են իրենց համայնքների բարիքները, ինչպես նաեւ այն ուտեստները, որոնք բնորոշ են տվյալ բնակավայրին:

Ակներ համայնքն այլ բարիքների հետ միասին ցուցադրում է գոմշի մածուն: Լյովա Սահակյանն ասում է, որ գյուղապետ Սպարտակ Մինասյանը, մտահոգ գյուղի «գերբ» հանդիսացող գոմշի մածունով, Արցախից հինգ գոմեշ է բերել: Գոմշի մածունը Սյունիքում մեծ հարգ ունի: Դանակով կտրիր, պատառաքաղով կեր. այսպես են այդ մածունի մասին ասում տեղացիները՝ հաշվի առնելով մածունի թանձրությունը: Եվ ամենաթանկ հյուրին նրանք պատվում են գոմշի մածունով:

Քարահունջեցիներն էլ, բնական է, իրենց օղու գովքն են անում եւ բոլորին հրավիրում համտեսի: Սյունիքի փոխմարզպետ Վարդան Դավթյանը, Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը հյուրասիրվողների շարքում են: Անմահական օղի է, արժանի գովասանքի, ասում են նրանք: Քարահունջեցիները ներկայացնում են օղու պատրաստման իրենց պապենական մեթոդները:

Ինքնատիպության սիրահար խնձորեսկցիներն իրենց տաղավարի աչքի ընկնող հատվածում գրել են՝ «Իմ հայրենասիրությունը սկիզբ է առնում Խնձորեսկից»: Վերիշենի տաղավարի գլուխգործոցը սյունյաց շփոթ կերակրատեսակն է: Այն արդեն մոռացության փոշիով է պատվում եւ սուզվում ժամանակի հորձանուտում, հայտնվում «Կարմիր գրքում»: Արթուր Շալունցն այն կարծիքին է, որ նման փառատոնների կազմակերպումը կնպաստի պապենական կերակրատեսակների «վերակենդանացմանը», որով էլ կարող ենք դեպի մեր տարածաշրջան ձգել բազում զբոսաշրջիկների եւ ինչու չէ, նաեւ անաղարտ պահել մեր դիմագիծը:

Կանանց զարգացման Գորիսի «Ռեսուրս» կենտրոնը փառատոնին ներկայացրել է կանանց ձեռքի աշխատանքները՝ բազմատեսակ հուշանվերներ: Բացի դրանից, ազգային տարազով կանայք ու աղջիկները բուրդ են մանում, գորգ ու կարպետ գործում:

Հետաքրքիր ձեւով է ներկայացել Գորիս համայնքը: Արվեստի դպրոցն ու գեղագիտական կենտրոնը ներկայացնում են իրենց ինքնատիպ աշխատանքները, որոնք ազգային կոլորիտի վառ նմուշներ են: Ակսել Բակունցի տուն-թանգարանի, երկրագիտական թանգարանի, գրադարանային համակարգի աշխատողները միասին կազմակերպել են թեյախմություն՝ օգտագործելով ոչ թե թեյնիկը, այլ մեր ավանդական, պապենական ինքնաեռը:

Փառատոնի հետաքրքիր մասերից է Արտուր Խոջաբաղյանի կազմակերպած ազգային պարերի բաց դասը, որի ժամանակ մասնակիցները ե՛ւ պարում են, ե՛ւ ազգային պարեր սովորում: Ի դեպ, հայրենասեր այս երիտասարդն ամեն շաբաթ պատանիների եւ աղջիկների համար կազմակերպում է ազգային պարերի պարապմունքներ: Փառատոնին նոր շունչ տվեցին դհոլահարների եւ «Սյունիք» պարային համույթների կատարումները, իսկ երգիչ Էրիկն ասես լրացրեց-ամբողջացրեց փառատոնի երաժշտական մասը:

Փառատոնի բացման ժամանակ Սյունիքի փոխմարզպետ Վարդան Դավթյանը, Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը նշեցին, որ նման փառատոնների կազմակերպումը կնպաստի տարածաշրջանում զբոսաշրջության, դրա ենթակառուցվածքների զարգացմանը: Հաշվի առնելով այդ՝ ՀՀ կառավարությունն այս տարվա հունիսի 9-ի նիստում հավանության է արժանացրել Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի հետ 2016թ. փետրվարի 23-ին ստորագրած 55 միլիոն վարկային պայմանագիրը, որով զբոսաշրջային եւ մշակույթի ենթակառուցվածքների բարեկարգում է նախատեսվում:

Գումար կտրամադրվի նաեւ Գորիսին՝ հանրային ենթակառուցվածքների, շենքերի ճակատային հատվածների, հանրային տարածքների, շենքերի տանիքների, թանգարանների, մոտեցող ճանապարհների, լուսավորության վերականգնման եւ այլ գործերի համար: Իսկ այդ ամենը ենթադրում է նոր որակ, նոր մշակույթ զբոսաշրջության զարգացման գործում:

Փառատոնը շարունակվեց Գորիսի պետդրամատիկական թատրոնի փոքրիկ ներկայացմամբ՝ գորիսյան բարբառով:

Մանկական զբոսայգում հանդիպում եմ Վալերիկ Գասպարյանին: Նրան, ով մի ժամանակ աշխատել է Գորիսի պետական քոլեջում, ղեկավարել Աշոտ Սաթյանի անվան երաժշտական դպրոցը: Եվ ամենամեծ առաքելությունը, որ կատարել է Վալերիկ Գասպարյանը, կապված է Գուսան Աշոտի հետ. նա նոտագրել է մեծ աշուղի երգերի որոշ մասը: Հիմա ապրում է Երեւանում: Գորիս է եկել կնոջ՝ Մարիետայի հետ՝ մի քանի օրով: Մեկ անգամ եւս Գորիսով ապրելու-զորանալու այս առիթը՝ փառատոնը, նրանք բաց չեն թողել:

- Ժողովուրդն ապրում է ոչ միայն հացիվ, - ասում է Վալերիկ Գասպարյանը: - Նրան նաեւ ոգեղեն սնունդ է պետք: Իսկ այս փառատոնը ծառայեց հենց այդ նպատակին:

Օգոստոսի 12-ի ամբողջ օրը Գորիսում հնչում էին Գուսան Աշոտի երգերը: Նրա անունը կրող ժողգործիքների համույթն օրը դարձրել էր հեքիաթային, օրը դարձրել սիրո օր... Իսկ միջոցառումը կազմակերպել էր «Արենի» հիմնադրամը Գորիսի քաղաքապետարանի հետ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Արծաթի հանքավայրի գաղտնիքները

էջ 2

ինքնագնաց մեքենաներ, «Ռադիուս» դիրքավորման համակարգ եւ Simba S7 C առաջին հորատամեքենան Ռուսաստանում՝ ամբողջովին էլեկտրոնային կառավարմամբ:

«Ի տարբերություն Կապանի հանքավայրի՝ Դուկատի հանքավայրը լիովին հագեցած է նորագույն տեխնիկայով եւ սարքավորումներով: Այնտեղ ես ծանոթացել եմ «Ռադիուս» համակարգի հետ, որի միջոցով դիսպետչերները կարող են կապ հաստատել աշխատակցի հետ, ով գտնվում է անհասանելի տարածքում, արտակարգ իրավիճակների ժամանակ փոխանցում է ռադիոազդանշաններ, եւ, անհրաժեշտության դեպքում, հնարավորություն է տալիս ժամանակին տարհանել անձնակազմին անվտանգ վայր», – իր տպավորություններով է կիսվում Կապանի ԼՀԿ-ի արտադրա-տեխնիկական բաժնի ղեկավար Արա Իսախանյանը:

Կապանի ԼՀԿ-ի աշխատակիցները ծանոթացել են Դուկատի հանքավայրի պայթեցման եւ հանքային աշխատանքների կազմակերպման, վերջինիս կառուցվածքի, հանքի տեղամասերի եւ ինժեներական ծառայությունների փոխհամագործակցության հետ, այցելել են հանքի ժողովների սենյակ, ծանոթացել են փաստաթղթերի վարման գործընթացին, արտադրական անվտանգության եւ առողջության պահպանման իրավիճակին, սովորեցին՝ ինչպես են կազմվում հաշվետվությունները տեղամասերում:

«Կարող եմ վստահաբար ասել, որ Դուկատի հանքավայրի սպասարկումը գտնվում է բարձր մակարդակի վրա: Յուրաքանչյուր տեղամասին կցված են իր սարքավորումները, որոնց էլ, իրենց հերթին, կցված են իրենց օպերատորները: Այս համակարգի շնորհիվ աշխատանքի ընթացքը դառնում է ավելի արագ եւ արդյունավետ, եւ մենք մտադիր ենք ապագայում կիրառել այս մոտեցումը մեր արտադրությունում», - ասում է Կապանի ԼՀԿ-ի հանքի պետ Արա Մկրտչյանը:

Փորձի փոխանակումը կատարվել է երկխոսության ձեւաչափով: Դուկատի հանքավայրի արտադրատեխնիկական բաժնի ղեկավար Տատյանա Նեմչինովան նշում է, որ հանդիպումն արդյունավետ էր երկուստեք: *«Մեզ այցելել են բարձր մակարդակի մասնագետներ: Հաճելի էր հետեւել իրենց ակտիվ գործունեությանը եւ բացահայտ հետաքրքրությանը, ինչպես նաեւ տեղեկանալ, թե ինչպիսի համակարգեր են կիրառվում Կապանի ԼՀԿ-ում: Այժմ մենք համակարգական կապ ենք պահում միմյանց հետ, շարունակում փորձի փոխանակումը՝ արդեն հիմա համակների եւ հեռախոսազանգերի միջոցով»:*

Ընկերության տարբեր ձեռնարկությունների աշխատակիցների փորձի փոխանակումը հանդիսանում է «Պոլիմետալի» կորպորատիվ մշակույթի կարեւորագույն տարրերից, որը թույլ է տալիս մշտապես կատարելագործվել, բարձրացնել աշխատանքի արդյունավետությունն եւ աշխատանքն ընկերությունում դարձնել ավելի հետաքրքիր:

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ մամուլի ծառայություն

Բարության եւ մանկության մոլորակը

էջ 2

նեղ ներկապնակին: Նախակրթարանում միշտ էլ մեծ շուքով են նշվում տոները: Նշվել են մանկապարտեզի 20 եւ 25-ամյակները, քրիստոնեության ընդունման 1700-ամյակը, բանակի 15 եւ 20-ամյակները: Իսկ օգոստոսի 8-ին կազմակերպված միջոցառումը նվիրված էր Անկախության 25-րդ տարեդարձին, որը տեղի ունեցավ Գորիսի դրամատիկական թատրոնում: 500 նստատեղ ունեցող դահլիճում նստարանները քչություն էին արել, եւ բազում-բազում մարդիկ ստիպված կանգնել էին միջանցքում, պատերի տակ: Հնչում է Հայաստանի պետական օրհներգը: Դահլիճ են մտնում այսօրվա եւ գալիքի զինվորները: Բեմում ասես զինվորական շքերթ է: Նախակրթարանի սաները զինվորական հագուստով զիվորների նման քայլում են հանդիսավորությամբ, խրոխտ, պատվի առնում՝ ասելով կարծեք՝ մենք ձեր արժանի հերթափոխն ենք, հավատացեք մեզ, վստահեք մեզ: Այնուհետեւ բեմը թնդում է պարերից: Երեխաները պարերի լեզվով են խոսում դահլիճի հետ: Իսկ պարի ամեն մի շարժում ու տարր մեծ ասելիք ունեն, խորունկ միտք, որ արտահայտում է հայոց անկախ պետության 25 տարվա պատմությունը: Ահա եւ բեմի վրա ալեկոծված ծովն է, հետո ալիքները դանդաղ-դանդաղ շարժվում են առաջ՝ մերթ բարձրանում, մերթ փարվում իրար, մերթ... Հանդարտվում է ծովը. ահա այդպես Թորգոմա տունը հասավ անկախության: Երեխաների ամեն մի պարը հայոց պետության անկախության 25 տարուց յուրաքանչյուրի վավերագիրն էր դարձել: Դահլիճը հիպնոսացած, ակնապիշ հայացքով դիտում է նախակրթարանի «Մենք քո ապագան ենք, Հայաստան» խորագրով միջոցառումը:

Հայաստան ասելիս ծնկներս ծալվում են, /Հայաստան ասելիս թեւերս բացվում են, - արտասանում են երեխաները եւ դահլիճին պարզում իրենց երազանքը. նրանք ընդամենը խաղաղություն են ուզում, որ ապրեն խաղաղ երկնքի տակ, խաղաղ երկնքի տակ հյուսեն հայոց պատմության իրենց հասանելիք էջերը: Իսկ անցած եւ ներկա էջերն արյամբ են նվաճվել:

- Այդ նրանք էին, որ իրենց կյանքով մեզ ապրելու իրավունք տվեցին, - ասում են երեխաները, - *եւ այսօր մենք խոնարհվում ենք նրանց առջեւ, ովքեր վիրավորվեցին ռազմի դաշտում, խոնարհվում ենք նրանց առջեւ, ովքեր եղան քաջ, խոնարհվում ենք նրանց առջեւ, ովքեր գնացին պատերազմ, ովքեր նահատակվեցին, խոնարհվում ենք նրանց առջեւ, ովքեր կանգուն պահեցին հայոց աշխարհը: Խոնարհվում ենք, խոնարհվում... ասես հազարաձայն լսվում է նրանց ձայնը, գնում հասնում բոլոր բոլորին:*

«Մենք քո ապագան ենք, Հայաստան» միջոցառման հիմնական լեյտմոտիվը հայ զինվորն էր ու հայոց բանակը, հայրենիքն ու մայրը: Այսինքն՝ այն գումարելիները, որոնց շնորհիվ ազգ ենք կոչվում ու պետություն եւ պետականություն ունենք:

Միջոցառման վերջում ելույթ ունեցավ նախակրթարանի տնօրեն Ժասմենա Խաչատրյանը: Նա շնորհակալություն հայտնեց հյուրերին, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին, քաղաքապետ Վաչագան Ադունցին: Նաեւ նշեց, որ այս միջոցառմամբ փորձեցին իրենց համեստ ներդրումն ունենալ հայոց անկախ պետության 25-րդ տարեդարձի նշանավորման գործում եւ հարգանքի տուրք մատուցել նրանց, ովքեր կերտեցին Հայաստանի անկախությունը:

Տնօրենը շնորհակալություն հայտնեց նաեւ տիկին Լորետա Բարսեղյանին, ով հաճելի անակնկալ մատուցեց փոքրիկներին՝ նրանց, ովքեր այս տարի «Լավագույն մանկական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի քաղաքային եւ մարզային փուլերում գրավել են 1-ին, իսկ հանրապետական փուլում՝ 3-րդ տեղը:

Թիվ 2 նախակրթարանի կազմակերպած այս միջոցառումը կրկին փաստեց՝ այստեղ աշխատում է այնպիսի կոլեկտիվ, որի նպատակը երեխաների կրթությունն ու դաստիարակությունն են, երեխաներին մանուկ հասակից հայրենյաց տան ավանդույթներին հավատարիմ լինելու եւ այն շարունակելու վերաբերյալ գիտակցության ձեւավորումը:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Սրբապիղծ եւ ունայն պչրուհին

Արդյո՞ք անմեղսունակ է լրագրողի փարաջայով աղջիկը՝ մայրաքաղաքային կայքերից մեկում ապաստան գտած Մարինա Խառատյանը

Պատասխան խոսք

«Սյունյաց երկիր» թերթի 2016թ. հուլիսի 27-ի համարը՝ նվիրված Սյունիքի մարզպետի հոբելյանին (տպագրվել էր Գորիսի քաղաքապետարանի պատվերով եւ մեր նախաձեռնությամբ), ինչպես եւ սպասվում էր, մեծ արձագանք գտավ: Առավել մեծ արձագանք գտավ թերթի խմբագրականը՝ «Սյունյաց աշխարհի արժանավոր զավակը» վերտառությամբ, որի հեղինակն ինքս եմ:

Արձագանքները մեծ մասամբ դրական էին, կային եւ բացասական արձագանքներ, ինչը, անշուշտ, բնական եւ օրինաչափ պիտի համարել (կոնկրետ մարդկանց նվիրված մեր հատուկ համարները միշտ էլ ոչ միանշանակ գնահատականի են արժանանում): Նման դեպքերում միշտ էլ բարեմիտ ընթերցողին ասել ու խնդրել եմ՝ անմեղադիր մնացեք, զի կարողությունը մեր այս չափ էր, իսկ դուք կարող եք ավելին անել…

Բայց եղավ մի հարթակ՝ tert.am մայրաքաղաքային կայքը, որի լրագրողը փորձեց նենգափոխել մեր խմբագրականը, աղավաղել ասվածը:

Օգոստոսի 1-ին կայքը հրապարակեց երկու հոդված՝ նվիրված վերոգրյալ խմբագրականին՝ ««Սյունյաց երկիր» կայքը Սուրիկ Խաչատրյանին համեմատել է Հիսուս Քրիստոսի հետ, իսկ իրեն՝ առաքյալի» եւ «Կարդացել եմ. Սյունիքի մարզպետն՝ իրեն Քրիստոսի հետ համեմատող ներբողի մասին»:

Երկու հոդվածն էլ անանուն էին, հեղինակը ծպտված էր՝ հակառակ բարոյականության տարրական նորմերի եւ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի պահանջների: Ենթադրեցինք՝ երեւի հեղինակն ամաչելու, հանրությունից թաքնված լինելու խնդիր ունի, ինչի համար էլ ոչ իր լուսանկարը, ոչ իր անուն-ազգանունը չի ներկայացնում:

Ի՞նչ էր գրված առաջին հոդվածում: Հեղինակային մեկ նախադասություն եւ վերնագիր: Մնացյալը քաղվածք էր մեր խոսքի տարբեր մասերից: Գրեթե նույնը՝ երկրորդ հրապարակման մեջ:

Ծպտյալը մոտ քսան շնորհավորանքից եւ բազում հոդվածներից, որոնց հեղինակները հանրապետության եւ մարզի ամենատարբեր ոլորտների բարեհամբավ ներկայացուցիչներ էին, անդրադարձել էր միայն մեր խոսքին, որը ոչ թե շնորհավորանք էր (ինչպես ինքն է կարծում), այլ պարզապես խմբագրական:

> *Օգոստոսի 2-ի առավոտյան փորձեցինք ճշտել՝ ո՞վ է կայքի խմբագիրը (պատասխանատուն): Պարզվեց՝ Սասուն Խաչատրյան: Խմբագիրն ասաց, որ ինքն այդ հրապարակումներից տեղյակ չէ, հոդվածներն ունեն հեղինակ, ով էլ անպայման կզանգահարի եւ մեզ հետաքրքրող հարցերին կպատասխանի: Մի քանի ժամ անց նորից հիշեցրի խմբագրին, նա նույն պատասխանը տվեց՝ առանց լրագրողի անունը եւ հեռախոսահամարը տրամադրելու:*

Ժամը 13:30-ի սահմաններում մեզ զանգահարեց մի աղջիկ եւ ներկայացավ՝ «Մարինա Խառատյան, ես եմ հոդվածների հեղինակը»:

Ողջունեցի նրան, շնորհակալություն հայտնեցի, որ թերթի այդքան ծավալուն համարից միայն մեր խոսքի հանդեպ է հետաքրքրություն ցուցաբերել: Եվ առաջարկեցի. *«Մենք հեռախոսով պիտի քննարկենք երեկվա ձեր երկու հրապարակումը, առաջարկում եւ խնդրում եմ՝ երկուստեք ձայնագրել այս հեռախոսազրույցը, որպեսզի հրապարակելու դեպքում վերստին աղավաղում եւ նենգափոխում տեղի չունենան»:*

Աղջիկը կտրուկ մերժեց: Նաեւ ասաց, որ ինքը մեզ հարցազրույց չի տա, թեեւ հարցազրույցի առաջարկ չէի արել նրան:

> *Եվ առանց լսելու, թե ինչ եմ հարցնում՝ սկսեց խոսել: Խոսելու նախաձեռնությունը մի կերպ վերցրեցի ձեռքս եւ փորձեցի մեզ հետաքրքրող հարցերը տալ: Երկու անգամ անջատեց հեռախոսը. ներողամիտ գտնվեցի՝ մտածելով, որ աղջկան երեւի ո՛չ մանկապարտեզում, ո՛չ դպրոցում չեն սովորեցրել, որ չի կարելի խոսելու ընթացքում հեռախոսն անջատել, մանավանդ երբ հանրային գործիչ ես, առավել եւս՝ լրագրող:*

Ինչեւէ, մի քանի հարց տվեցի նրան, որոնց շարադրանքը՝ ստորեւ:

1. Եթե դուք վստահ էիք ձեր գրվածքի ճշմարտացիության մեջ, ապա ինչո՞ւ եք ընտրել անոնիմկայի ձեւը եւ երկու հոդվածը ներկայացրել անստորագիր, դուք հանրությունից թաքնվելու, ամաչելու պատճառ ունե՞ք:
2. Դուք իսկապե՞ս մինչեւ վերջ կարդացել եք մեր խմբագրականը, արդյո՞ք ընկալել եք մեր խոսքը, թե՞ չեք հասկացել ու սեփական հիվանդ երեւակայության, սեփական պատկերացումների տիրույթում թավալվել եք:
3. Խմբագրականի ո՞ր բառի, ո՞ր նախադասության հիման վրա եզրակացրիք, որ մարզպետին համեմատել եմ Հիսուսի կամ Խորենացու, իսկ ինձ՝ առաքյալի հետ: Գոնե մեկ բառ կամ մեկ նախադասություն, որը ձեզ թույլ է տվել մտածել այդկերպ:
4. Գոնե գիտե՞ք, թե խմբագրականում մեր վկայաբերած առաքելական խոսքն Աստվածաշնչում ինչ առիթով է հնչել, ինչու եմ նրանց խոսք-պատգամն իբրեւ ուղեցույց ընդունել թերթի ամբողջ համարում:

…Ճիշտն ասած ի սկզբանե շատ լուրջ էի վերաբերվում զրուցակցիս, քանի դեռ վերջին երկու հարցը չէի տվել ու նրա «պատասխանը» չէի ստացել (ի վերջո, այդ հարցերի պատասխանից պետք է բխած լիներ նրա հոդվածի վերնագիրը):

> *Ըստ էության աղջկան ծանոթ էր Աստվածաշունչ բառը, գիտեր նաեւ Հիսուս Քրիստոս անունը, բայց այնպիսի անհեթեթ, անմիտ պատասխան տվեց իմ վերջին երկու հարցին, որ խղճացի նրան, ողբացի նրա ունայն գոյության համար ու մեծագույն ափսոսանքի զգացումով պարուրվեցի, որ նրան լուրջ եմ ընդունել ի սկզբանե, լրագրող եմ կարծել եւ ձգտել իր հոդվածի շարժառիթը, հիմքերը, մեթոդաբանությունը պարզել, հասկանալ:*

Ի դեպ, մեր խոսակցության ընթացքում երկու-երեք անգամ օգտագործեց «Լրատվության մասին օրենք» արտահայտությունը, եւ ինձ համար պարզ դարձավ, որ խեղճը ծանոթ չէ այդ օրենքին, պարզապես օգտագործում է այդ արտահայտությունը՝ գոնե մի քիչ ներկայանալի երեւալու, լրագրողի պատրանք ստեղծելու համար:

Նրա պատասխանները լսելուց հետո ստիպված էի եւս երկու հարց տալ, որոնք, սակայն, մնացին անպատասխան. «Հիմա կարո՞ղ եմ ասել, որ դուք կիսագրագետ եք, որ դուք ձեւ եք՝ առանց բովանդակության, որ դուք նենգափոխել եք մեր մտքերը», «Դուք չե՞ք պատրաստվում հրապարակավ ներողություն խնդրել ինձ զրպարտելու, իմ հոդվածը ստորաբար նենգափոխելու եւ Բարձրյալի անունն անհարկի օգտագործելու համար»:

Իմիջիայլոց, ընթացքում ցանկացա իմանալ նաեւ, թե որտեղ է կրթություն ստացել ինքը, ինչ ասել է ներբող բառը, բայց…

Հա, հասցրինք քննարկել մեկ հարց եւս, որը նույնպես շատ կարեւոր է աղջկա հոդվածների միտումը, շարժառիթը հասկանալու համար: Երբ օգոստոսի 1-ին հրապարակվեցին երկու անանուն հոդվածները՝ «քոմենթ»-ներ ծնվեցին, որը բնական եմ համարում: Սակայն եղավ մի «քոմենթ», որն ուղղակի հայհոյանք էր տողերիս հեղինակին: «Քոմենթ»-ի հեղինակն իմ հոդվածներից մեկի «հերոսն» էր՝ թշվառականը, հայտնի առլեկինը, ով հիմա էլ գարեջրի մեկ շիշ օրավարձով մարդկանց հայհոյում է (ի դեպ, դատարանի վճռով էլ հաստատվեց, որ թշվառականն ինքն է որ կա): Կապանի մոտ քսան ընթերցող, ինչպես մեզ տեղեկացրին, անմիջապես արձագանքել են «քոմենթ»-ի հեղինակ թշվառականի կաղկանձին: Բայց, ո՜վ զարմանք, կայքի պատասխանատուները թշվառականի «քոմենթ»-ը թողել էին, իսկ համարժեք պատասխան-արձագանքները շատ արագ ջնջել:

Այդ մասին ասացինք նաեւ կայքի խմբագրին՝ ստանալով անհիմն պատասխան՝ «քոմենթ»-ի հարցով ուրիշ մեկն է զբաղվում…

Ահա այսպիսի պատմություն…

Մեր պատասխան խոսքից հետո հիշյալ աղջիկը գուցե եւ դատարան դիմի: Դատարանում հաճույքով կշարունակեմ բանավեճը: Բայց ես, միեւնույն է, չեմ կարող ինձնից վանել միտքը, որ լրագրողի փարաջայով թաքնվածը լրագրության հետ հեռավոր աղերս անգամ չունեցող մի անձնավորություն է:

Ես խոստացա գտնել նրա՝ երբեւէ հեղինակած հոդվածներն ու անպայման ընթերցել, մինչեւ վերջ ճանաչել նրան ու ներկայացնել հանրությանը, քանզի նման նենգարկումի, աղավաղումի, դասական հիմարության եւ դատարկության այսպիսի երեւույթի չէի հանդիպել խոսքի աշխարհում:

Եվ նենգարարության մեջ, ըստ էության, այնքան էր վարպետացած այդ աղջիկը, որ իր ունայն գոյությունը հիշեցնելու, իր չկայացածության սառույցը ջարդելու համար սրբապղծորեն օգտագործեց Հիսուս անունը՝ չունենալով գեթ մեկ բառից կամ մեկ նախադասությունից բաղկացած հիմք…

Որպես վերջաբան հետեւյալը կասեմ հոդվածագրին. թերթի քննարկվող համարում մենք ցանկացել ենք ներկայացվող կերպարին նայել անաչառության, նրա արած-դրածը տեսնողի, ամեն ինչ չմրոտողի անկողմնակալ դիրքից, ինչի համար եւ ուղեցույց ենք ընդունել առաքյալների խոսք-պատգամը: Իսկ դուք ոչ միայն չեք հասկացել պարզագույն այդ մոտեցումը, այլ չեք կարողացել գոնե մեկ օրինակ բերել, որ կցուցաներ, որ թերթի խմբագրությունը հավատարիմ չի մնացել որդեգրած սկզբունքին: Եվ եթե այդքանից հետո տարընթերցումի, չարամտության ճանապարհն եք բռնել, ապա ձեր իսկ հիշատակած Հիսուսը՝ ամենատես Բարձրյալը, թող ձեր մեղքերին թողություն տա:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Վերաօծվեց Շիկահողի Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցին

Օգոստոսի 6-ին Շիկահողի Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցում տասնյակ տարիներ հետո հնչեց Տերունական աղոթք, մյուռոնաբույր տարածվեց, խունկ ծխեցվեց, եւ հայ հոգեւորականն առ Աստված հղեց իր աղոթքը: «Երկիր եւ մշակույթ» կազմակերպության նախաձեռնությամբ եւ միջոցներով վերականգնված եկեղեցու վերաօծման եւ բացման արարողությունը կատարեց Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Գերաշնորհ Տեր Հովնան եպիսկոպոս Հակոբյանը՝ մասնակցությամբ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Հակոբյանի եւ Կապանի տարածաշրջանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանի:

Արարողությանը մասնակցում էին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, համայնքի ղեկավարներ, բարերարներ, տարբեր բնագավառի ներկայացուցիչներ, զբոսաշրջիկներ եւ բազում շիկահողցիներ:

Շիկահողի Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցին 16-րդ դարի միանավ բազիլիկ կառույց է՝ կոպտատաշ բազալտե քարերով, գետաքարերով, կրաշաղախով եւ այլն, սակայն բեմին ագուցված մի վիմագրից երեւում է, որ ներկա շինության տեղում եղել է 13-րդ դարի կառույց (1215): Եկեղեցին հատկապես ավերվել էր խորհրդային տարիներին, երբ օգտագործել են զանազան նպատակներով: Որպես ճարտարապետական կառույց՝ այն բնորոշ է վաղ միջնադարին, սակայն այդ շրջանից նյութեր գրեթե չեն պահպանվել՝ միայն որոշ խաչքարեր, արձանագրություններ, պատմական տեղեկություններ: Կառույցը, որն այսօր գոյություն ունի եւ որը վերականգնվեց (վերականգնող ճարտարապետ՝ Ստեփան Նալբանդյան), 16-րդ դարի սկզբի եւ 17-րդ դարի՝ ժողովրդական մոտեցմամբ կառուցված ճարտարապետական կոթող է՝ գրանցված հանրապետական նշանակության հուշարձանների ցանկում:

2012թ.-ից սկսվել են գիտահետազոտական եւ վերականգնման աշխատանքները, որին մասնակցել են նաեւ կամավորներ: Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Հրակարսիմ» ՍՊ ընկերությունը, որը հատկապես բանվորական ուժը ներգրավել է գյուղից՝ ստեղծելով ժամանակավոր աշխատատեղեր: Ծրագրով նախատեսված չէր վերանորոգել դեպի գյուղի դպրոց տանող ճանապարհը, բայց բարերարներ Հայկ եւ Հիլդա Մանջիկյանների անձնական միջոցներով աշակերտները հնարավորություն ստացան բարեկարգ ճանապարհով դպրոց գնալ:

Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Հակոբյանը շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել կառույցի վերականգնման աշխատանքներում՝ «Երկիր եւ մշակույթ» կազմակերպությանը, վերանականգնող ճարտարապետ Ստեփան Նալբանդյանին, Հայկ եւ Հիլդա Մանջիկյաններին, բարերարներին, կամավորներին: *«Նրանց շնորհիվ այս եկեղեցին կրկին դարձավ Աստծո բնակատեղի, եւ Աստծո շնչի ներքո այս համայնքը պետք է ապրի, լցվի մանուկներով: Իբրեւ հա-*

էջ 8

Վերաօծվեց Շիկահողի Սուրբ Սդեփանոս Նախավկա եկեղեցին

էջ 7

վատավոր ժողովուրդ՝ այս կոթողի շնորհիվ համայնքի բնակիչներն էլ ավելի կկապվեն մեր սուրբ եկեղեցուն», – մասնավորապես նշեց տեր Մակար վարդապետ Հակոբյանը:

Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Գեղաշնորհ տեր Հովնան եպիսկոպոս Հակոբյանը նախեւառաջ ներկայացրեց Ստեփանոս Նախավկա սրբի մասին, այնուհետեւ երախտագիտություն հայտնեց եկեղեցու վերականգնման համար:

«Աստծո Աջն ու Խաչը թող պահապան լինեն Հայաստան աշխարհին, հայ զինվորին, ամբողջ հայ ժողովրդին: Տիրոջ օրհնությամբ մեր ապագան կերտենք եւ բանուկ պահենք հայ եկեղեցու ճանապարհը, քանզի նա է մեր ինքնության եւ հայկերտման միակ գրավականը, ինչպես պատգամում է Խորիմյան Հայրիկը», - շնորհակալական խոսքում մասնավորապես նշեց տեր Հովնան եպիսկոպոս Հակոբյանը:

Ինչպես տեղեկանում ենք Շիկահող գյուղի հուշարձանների մասին հոդվածից, եկեղեցու շուրջը, առավելապես հարավային կողմում, գերեզմանոցն է, որտեղ ամփոփված են Տեր-Մովսիսյան, Մելիք-Նուբարյան հոգեւոր հայրերը: Սա մեկ անգամ եւս հաստատում է, որ Նուբարյանների մելիքական տոհմը ծագում է Շիկահող գյուղից, որի ներկայացուցիչներից է եղել նաեւ հայ մեծանուն ազգային գործիչ ու բարերար Պողոս Նուբար Փաշան:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նորը՝ Կապանի բժշկական կենտրոնում

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում կատարվում է էնդոսկոպիկ վիրահատություններ շագանակագեղձի ադենոմայի ներմիզուկային մասնահատում, միզապարկի քարերի էնդոսկոպիկ հեռացում, միզուկի նեղացած հատվածների հատում, միզապարկի մակերեսային նորագոյացությունների հեռացում:

Կապանի բժշկական կենտրոնը վերանորոգումից հետո համալրվել է նորագույն սարքավորումներով, այդ թվում՝ ուրոլոգիական հանրահայտ Karl Storz էնդոսկոպիկ հավաքածուով, որը տարածաշրջանում լավագույնն ու եզակին է: Այս էնդոսկոպիկ հավաքածուն հնարավորություն է տալիս կատարելու էնդոսկոպիկ վիրահատություններ, որը կատարում է բժիշկ-ուրոլոգ Մ.Դ.Գրիգորյանը: Վիրահատություններն ավելի անվտանգ են եւ հետվիրահատական շրջանն ավելի կարճ: Ուզում եմ նշել, որ շագանակագեղձի ադենոմայի բուժման ամենաարդյունավետ եղանակն է համարվում ներմիզուկային մասնատումը կամ տրանսուրետրալ ռեզեկցիան: Այս վիրահատությունը կատարվում է ողնուղեղային անզգայացման ներքո (հիվանդն արթուն է եւ պորտից ներքեւ ցավազրկված), երբ հատուկ գործիք է անցկացվում միզուկի միջոցով մինչեւ միզապարկ ու կատարվում է ցիստոսկոպիա: Այնուհետեւ գործիքը փոխարինվում է ռեզեկտոսկոպով (այն գործիքը, որի միջոցով կատարվում է վիրահատությունը), եւ կատարվում է շագանակագեղձի գերաճած հյուսվածքի մասնատում: Ադենոմայի կտորները հեռացվում են միզապարկի լվացման միջոցով, կատարվում է նաեւ արյունահոսող անոթների կուագուլիացիա (այրում): Վիրահատության վերջում տեղադրվում է եռաճյուղ ուրետրալ ֆոլեյ կատետր (խողովակ, որի միջոցով մի կողմից միզապարկը լվացվում է ստերիլ հեղուկով ու մյուս կողմից դուրս բերվում): Վերջինս հեռացվում է, երբ հիվանդի մեզը մաքրվում է, դա սովորաբար լինում է հետվիրահատական 2-3 րդ օրերին, այնուհետեւ հիվանդը միզում է բնական ճանապարհով, որոշվում է մնացորդային մեզը, եւ տրվում են համապատասխան խորհուրդներ:

Էնդոսկոպիկ հավաքածուն հնարավորություն է տալիս կատարել նաեւ միզապարկի քարերի էնդոսկոպիկ հեռացում, միզուկի նեղացած հատվածների հատում, միզապարկի մակերեսային նորագոյացությունների հեռացում, շագանակագեղձի ադենոմայի հեռացում, ինչպես նաեւ կիրառվում է ախտորոշիչ նպատակով: Արդեն իսկ կատարվել են տասնյակից ավելի վիրահատություններ, որոնք անցել են հարթ, առանց բարդությունների:

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 4 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-Ի աշխարհագրություն /5 դասաժամ/, ինֆորմատիկա /3,5 դասաժամ/, տեխնոլոգիա /1 դասաժամ/, կերպարվեստ /1 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում):

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի:

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ 2016 թվականի սեպտեմբերի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2016 թվականի սեպտեմբերի 17-ին ժամը 14: 00-ին Կապանի թիվ 4 միջնակարգ դպրոցում՝ Վաչագան թաղամաս:

Տեղեկությունների համար զանգահարել 094815798:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրը կատարում է 2016-17 ուստարվա ընդունելություն

Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական ծրագրով

կրթության ձեւը՝ առկա /ստացիոնար/, հիմնական ընդհանուր կրթության հիմքով, անվճար, ուսման տեւողությունը՝ 3 տարի հետեւյալ մասնագիտությունների գծով.

• Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում, որակավորումը՝ ներկարար,

• Վարսավիրական արվեստ եւ զարդային դիմահարդարում, որակավորումը՝ վարսահարդար:

Մրցույթով անցած սովորողները կստանան կրթաթոշակ, միջնակարգ կրթություն եւ մասնագիտական որակավորման դիպլոմ:

Կրթահամալիր ընդունվել ցանկացողները պետք է ներկայացնեն.

1. Դիմում,

2. կրթության մասին փաստաթղթի բնագիրը,

3. 4 լուսանկար /3x4 չափսի/,

4. Անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր, մինչեւ 16 տարեկան դիմորդի համար՝ ծննդյան վկայական,

5. Տեղեկանք բնակավայրից:

Դիմումները ներկայացնել կրթահամալիրի ընդունող հանձնաժողովին, մինչեւ օգոստոսի 25-ը, մրցույթը կանցկացվի օգոստոսի 26-27-ին:

Դասերը կսկսվեն սեպտեմբերի 1-ից:

Հասցե՝ ք.Կապան, Սպանդարյան փողոց, շենք 4:

Հեռախոսահամարներ՝ 2-34-29. 2-84-66:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ Սյունիքի մարզի Լեհվազի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն,

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ սեպտեմբերի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 17-ին՝ ժամը 12:00-ին, Լեհվազի միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ գ.Լեհվազ, 1-ին փողոց ,շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել 093627492 հեռախոսահամարով:

ԿՈՐԵԼ Է Կապանի պոլիտեխնիկումի 1989-90թթ. ուստարվա շրջանավարտ Անուշ Փայլակի Սարգսյանի ՀՄ-I 465607 դիպլոմը (գր. N42): Համարել անվավեր::

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է 2 սենյականոց բնակարան, 76.35 քմ ընդհանուր մակերեսով: Հասցե՝ ք.Կապան, Մելիք-Ստեփանյան 4, 3-հարկանի շենքի 2-րդ հարկ: Ստալինյան նախագիծ, գազֆիկացված է, վիճակը՝ բարվոք: Զանգահարել՝ (094) 766 425:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 15.08.2016թ.: